



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material




335

P-41

2.5

1 Jan



335

F-41

Ա 8 Հրատարակութիւն Յովհաննես Դաւթեանի Ա 8

05 JAN 2010

Փ H
35549

Ա. Բեբել

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՍՕՑԻԱԼԻԶՄԸ

Կրօնական բանակոփու Գիւֆֆէ աւանի Գօդօք
քահանայի և Ա. Բեբելի մէջ.

Ռուսերէնից թարգմ. Ա. Տ-Ան.

685

1906

Երեսութեած ոպարտն ՀԵՐՄԱՆԱ բնկեր.,
Մադարեան փողոց (163).
Թիֆլիս

01.03.2013

ԴՐՅՈՓ ԳԱՀԸՆԱՑԻ ՆԱՄԱԿԻ

«Volksstaat»-ի յարգելի խմբագրութեանը
կայպցիդում.

«Volksstaat»-ի № 114-ի առաջնորդող յօդ-
ւածում, նոյեմբերի 21-ին, գուք Զեր հրատարա-
կութեամբ լոյս տեսած «Գերմանական բէյլստան-
գի և լանդտագների պարլամենտական գործու-
նէութիւնը և սօցիալ-դեմոկրատիան» պրօյկից
ըերում էք մի կտոր:

Այստեղ, ի միջի այլոց, ցուցադրած է այն
փաստը, թէ կառավարութիւնը և եկեղեցին «եղ-
բայրաբար պաշտպանում են իրար, երբ խնդիրը
վերաբերում է ժողովրդին ստրկացնելուն, յի-
մարացնելուն ու կեղեքելուն». թէ կաթոլիկ հո-
գևորականութիւնը և ներկայ կառավարութիւնը
«գործում են ձեռք-ձեռքի, երբ խօսքը ժողովուր-
դը գերի դարձնելու մէջ է». վերջապէս, թէ հո-
գևորականութիւնը միշտ «ըէակցիայի և վայրա-
գութեան կողմնակից է»:

Ես կաթոլիկ եկեղեցու անդամ եմ և կաթո-
լիկ հոգևորականութեան ներկայացուցիչ. իբրև



3753-84

քահանայ, ես պարտաւոր եմ հազնել մի շոր, որ
ամեն ինձ պատահող մարդկանց ցոյց տայ, թէ
ես պատկանում եմ կաթոլիկ հոգևորականութեան.
ուստի և դուք համաձայնեցէք, որ վերոյիշեալ մե-
ղադրանքները շաշափում են և իմ անձնական պա-
տիւս, և որ, այդ մեղադրանքների շնորհիւ ես
միանգամայն վարկաբեկ եմ եղած «Volksstaat»-ի
բոլոր ընթերցողների առաջ, որոնց հետ կեան-
քում կարող եմ հանդիպել. այդ պատճառով ես
ստիպւած եմ բոլորի Զեր օրինաւորութեան դէմ
և խնդրել Զեզ, որ Զեր ընթերցողների գիտու-
թեանը հասցնէք այն, ինչ ես կասեմ ի պաշտ-
պանութիւն և արդարացում ինձ: Այդ ես համա-
րում եմ իմ իրաւունքն ու պարտքը, մանաւանդ,
երբ ես ոչ մի բան չունեմ, բացի իմ պատից և
բարի անունից. և հետեապէս, հէնց ճիշտ ինձ
համար է ասած, թէ՝ պատիւը կորսւեց, ամեն
բան կորսւեց:

Դուք հակառակորդ էք կաթոլիկ կրօնին, դուք
հակառակորդ էք նոյնպէս լիբերալ բուրժուազիա-
յին: Երբ վերջինիս կաշուած իդէօլոգները Տէլ-
կիանների*) յանցանքները վերադրում են Զեզ, ամ-
բողջ ուժով դուք գոռում էք Զեր հասցէին յա-
րուցած զրպարտութեան դէմ, և միանգամայն ար-

*) Ս. գ. այն ժամանակւայ երկու ուղղութիւն-
ների տարածայնութեանը մասնակցող անձնաւորութեան
է ակնարկում:

դարացի նկատում էք, թէ սօցիալիզմը չի կարէ-
լի պատասխանատու ամել մասնաւոր անձնաւո-
րութիւնների արարմունքների պատճառով, որ ի-
րենց սօցիալիստ են անւանում. ու Հասսէլման-
ների և Հազէնկլեվէրների հետ ամեն համակար-
ծիք լինելուց հրաժարում էք: Բայց և այնպէս,
ես, ի յոյժ զարմանս իմ, համոզւեցի, որ դուք
պապական իշխանութեան և պապական հոգևորա-
կանութեան վերաբերմամբ նոյն այդ սխալի մէջ
էք ընկնում, որի համար այնպէս կծու մեղադ-
րում էք լիբերալներին: Եկեղեցին դուք պատաս-
խանատու էք անում սխալների համար, իսկ կը-
րօնը — իր հետևողների պակասութիւնների ու
զանցառութիւնների համար. առանձին մարդու
յանցանքը Դուք դնում էք ի նախատինս ամբող-
ջի. մեղաւորի հետ Դուք դատապարտում էք ան-
մեղին: Յոյց տւէք մի արատ, չարիք ինչքան էլ
նա խոր արմատացած լինի ամեն երկրային բը-
նութեան մէջ — անարդարութիւն, ստորութիւն,
որ խստիւ արգելած ու զատապարտած չլինեն
կաթոլիկ կրօնը և կաթոլիկ եկեղեցու վարդապե-
տութիւնը. մի երկոյթ տատցէք ինձ, որ դուք
նախատինքի ու անարդանքի արժանի էք համա-
րում, որի վերացնելուն ձգտում էք, և որը կա-
րող էր չվերանալ, եթէ կաթոլիկ եկեղեցու ու-
սուցմունքն անցնելէր կեանքի մէջ: Ասացէք ինձ
մի բան՝ լաւ, վսեմ, ցանկալի. թւեցէք թէկուզ
որևէ է առաքինութիւն, որը կծաղկէր, առանց որ

մարդիկ հետևեին քրիստոնէական վարդապետութեան. դուք չեք կարող այդ անել: Ուստի և պարտաւորւած պիտի համաձայնէք, որ Զեր քըննադատած զանցառութիւնների մէջ մեղաւոր չեն ոչ կաթոլիկութիւնը, ոչ կրօնը, ոչ էլ եկեղեցին, այլ՝ մարդիկ:

Միթէ դուք չգիտէք, որ հազարաւոր հարիւր-հազարաւոր ու միլիոնաւոր քրիստոնեյ-կաթոլիկներ և կաթոլիկ քահանաներ արդէն 1800 տարւայ ընթացքում տառացի կատարել են Քրիստոսի խօսքերը. «Եթէ ուզում ես լինել կատարեալ, գնա, ծախիր ստացւածքդ, բաժանիր աղքատներին և հետեւիր ինձ»: Միթէ դուք չգիտէք որ այնպիսի մարդիկ, ինչպէս Ֆրանցիսկ Աստիգցին, Վինցենտ Պառլցին և անհամար ուրիշներն աղքատների համար հաւաքել են միլիոններով տալէր, բաժանել են իրենց ամբողջ կարողութիւնը չքաւորներին, և Ասածու ու մերձաւորի սիրուց, բարեհաճ կամքով ընտրել են թշւառութիւնն իրենց վիճակ, որպէս զի թշւառների հետ թշւառ լինեն: Միթէ դուք չգիտէք, որ մինչեւ այսօր էլ հազարներով ու հարիւր հազարներով կաթոլիկներ և քահանաներ այդ օրինակին են հետևում:

Օրինակ եթէ ֆօն-կետաելէր եպիսկոպոսի եղբայրը գուսարական մունղիրը փոխում է վեղարաւոր կուսակրօնի կոշտ փարաջայի հետ և սպայական աշխոյժ կեանքը միաբանութեան դա-

ժան ճգնաւորութեան հետ. Եթէ հարցասէր ուսանողը փիլիսոփայական սիստեմների հետ՝ Սոկրատից ու Պիտագորից մինչև Շոպէնհաուէրը, Ֆեյերբախը, Լասարին ու Մարքու ծանօթանալով, վերջ ի վերջոյ գալիս է այն եղորակացութեան, թէ կաթոլիկութիւնը ամենալաւ և ամենից աւելի կատարեալ ուսուցմունքն է, և դառնում է աստւածաբան ու քահանայ, որպէս զի բոլոր ջանքերը նւիրէ այդ միակ ուղիղ ու փրկարար վարդապետութիւնը տարածելուն, Եթէ այդ փաստերը Զեղ յայտնի են, ապա, հարց է ծագում, ինչ իրաւունք ունէք Դուք կասկածանքի ենթարկելու այդ մարդկանց անկեղծութիւնն ու վեհանձնութիւնը և մեղադրել նրանց «շահամոլ կեղծիքի» մէջ:

Երբ սօցիալիզմի համառակորդները նման մեղադրանքներ են բարձրացնում լիբերէիստ և բերել պարոնների դէմ, Դուք խորին ցասումով մատնադրոյց էք անում այն դժւարին կացութիւնը, որի մէջ Զեղ զնում է Զեր սկզբունքների պաշտպանութիւնը: Այդպէս ահա ես էլ, իմ կողմից, նոյնպէս դժկամակում եմ այդ մեղադրանքի համար, թէկ միաժամանակ կարծում եմ, որ պարզապէս կարելի է հերքել այդ մեղադրանքները, ցոյց տալով այն խղճալի դրութիւնը, որի մէջ ներկայումս գտնուում է կաթոլիկ քահանաների մեծագոյն մասը: Հաղիւ թէ ուրիշ կարգի ծառայողներ, ուսուցիչներից ու գիշերային պա-

հապաններից զատ, աւելի քիչ վարձատրութիւն ստանալիս լինեն, քան կաթողիկ ցածր հոգեորականութիւնը: Ես կարող եմ ազացուցել Ձեզ, որ նիւթականի կողմից ես աւելի վատթար կացութեան մէջ եմ, քան ամեն տան ծառայող ու նաժիշտ, մինչդեռ չնչին վարձատրութիւնը չարիքներից փոքրագոյնն է. ատելութիւն ու հալածանք, ծաղր ու ծանակ, ահա կաթողիկ քահանայի ներկայիս բախտը:

Մի մոռացէք, ուրեմն, այսուհետեւ երբէք առացւածքը. «մի անիբ ուրիշներին այն, ինչ որ չես ուզում ուրիշներն անեն քեզ»:

Թերևս զուք մտածէք այժմ՝ եթէ հիմք չկայ ամբողջ կաթողիկ հոգեորականութիւնը մեղագրելու կեղծիքի ու շահատակութիւնների մէջ, գոնէ այն քահանանաները, որոնք իրենց կոչումին վերաբերում են լուրջ ու ազնիւ, — պարզապէս տեսդային երազողներ ու տիմարներ են: Այդպիսի խօսքերն, իմ աչքում, շատ աւելի ներելի կլինէին. բայց և այդ գէազում էլ ինձ անհասկանաւի պիտի թւար, թէ ինչպէս են կարողանում սօցիալիստները գարմանալ ու գանգատել, երբ իրենց հատուցանում են նոյնպիսի ածականներով:

Մինչև հիմա ես կարծում էի, թէ «Volksstaat»-ի խմբագիրներն ակնածելի չափով օժտւած են բարոյական ըմբռնումով և բարեխիղճ ոգով, քան իրենց ընկերակիցները օֆֆիցիօզ ու լիբերալ մամուլի մէջ, ապա թէ ոչ չէի զրի այս հա-

մառօտ պաշտպանումն և ուղարկի Ձեզ: Յուսով եմ, որ սխալւած չեմ.

Վիլհէլմ Գօգօֆ քահանայ:

Գիւֆֆէից, Պրուսիայում Օլդէնդորֆի մօտ.
Նոյեմբ. 22-ին 1873 թւին:

ԲԵԲԵԼԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Արժանապատիւ հայր.

9-րդ համարում Դուք տեղ էք տւել մի նամակի, որով Դուք, իբրև «Եկեղեցու սպասաւոր», աշխատում էք պաշտպանւել այն մեղագրանքներից, որ ես արել եմ եկեղեցու և առհասարակ կրօնի դէմ իմ «Գերմանական ըէյլստագի պարլամենտական գործունէութիւնը...» զրքոյկի մէջ: Զեր պաշտպանութիւնը պահանջում է պատասխան, և այն էլ ինձնից, որպէս զրքոյկի հեղինակից: Պատասխանի ուշացնելն իմ կողմից արդարացւում է երկարատես հիւանդութեամբ, որ ինձ խանգարում էր զրել: Իմ պատասխանը մասամբ աւելի ընդարձակ գուրս եկաւ, բայց զրանից զուք կարող էք եղբակացնել, որ ես Ձեր առարկութիւնները համարել եմ բաւականին կարեոր ու նշանակալից, որ նրանց հերքումին ընդարձակ մի զրութիւն նւիրեցի:

Դուք անձնապէս ձեր պատիւը շոշափած ու վիրաւորւած էք համարում իմ զբքոյկի մի քանի տեղերից, բայց մի անգամ էլ կարդալով, դուք, թերևս, կհամաձայնէք, որ հիմք չունէք դըրա համար։ Քահանաներից առանձին անհատներին չեմ դիպել. ես երբէք չեմ ժխտել, որ «եկեղեցու սպասաւորների» մէջ կան այնպիսիները, որոնք իրենց կոչումը կատարում են սրտանց, մաքուր համոզումով. ես մինչև անգամ այդ չէի կարող անել, մանաւանդ որ որոշ չափով ծանօթ եմ այն պատրաստական հիմնարկութիւնների հետ, որոնք նախասահմանւած են դաստիարակելու ու ձևակերպելու մատաղ, նախապաշարումներից ազատ և գեռ անզիտակ գլուխները «եկեղեցու սպասաւորութեան» համար։ Ես առաջ կերթամ. ես ընդունում եմ, որ կան հազարաւոր մարդիկ, մինչև անգամ կրթւած՝ որոնք հոգով և մարմնով նւիրւած են եկեղեցուն ու նրա վարդապետութեանը. որ կան հազարներով, տասը հազարներով ու եղել են միլիոնաւոր մարդիկ, որոնք ամեն տեսակի բարձր գոհաբերութիւններով աշխատել են եկեղեցուց իրենց հոգիների փրկութիւն գտնել։ Բայց այդ բոլորն արդեօք հակառակն է ասում իմ բերած հայեացքներին, որոնց մասին այժմ խօսք կայ. Ոչ. բոլորովին ոչ։ Նոյն անձնւիրութիւնը, անձնուրացութիւնն ու ճգնութիւնը, նոյն ֆանտիկոս հաւատը, որով աչքի են ընկել ու մինչև օրս էլ աչքի են ընկնում քրիստոնէու-

թեան միլիոնաւոր համակրողները, ոչ պակաս չափով յատուկ է նոյնպէս յուդայականութեանը, Բուդդայի, Կոնֆուցիոսի և Մահմեդի միլիոնաւոր համակրողներին. Նրանք բոլորը, նոյն իրաւունքով, ինչպէս դուք, կարող են ցոյց տալ իր ենց կրօնի յառաջադիմութիւնները, նրա հետեւողների զոհաբերութիւնները։

Եթէ հնարաւոր լինէր վիճակագրական փաստերով հաստատել, թէ կրօններից որի հետեւողներն աւելի ջերմեռանդ ու գործունեայ են եղել, աւելի ողջախոհութիւն, ճգնութիւն ու անձնագոհութիւն են ցոյց տւել՝ այն ժամանակ անտարակոյս կերևար, որ Բուդդայի կրօնը ամեն կողմից էլ բարձր է կաթոլիկութիւնից և քրիստոնէութիւնից առհասարակ։

Այդպիսով, եթէ ձեր տեսակէտից գնահատելու լինենք կրօնը, այն ժամանակ ճշմարիտ և խսկան կրօնը, իրօք, պէտք է բուդդայականութիւնը հանդիսանայ, իսկ ես պիտի գուրս գամ մի մեծ յանցագործ, երբ յայտարարում եմ, թէ՝ չնայելով ոչ մի բանի, բուդդայականութիւնն էլ, որպէս և քրիստոնէութիւնը, միայն խանգարել և խոչնդու է հանդիսացել մարդկութեան ինքնուրյունութեան ու ազատագրական զարգացմանը։ Գալով ձեզ, դուք ձեր եկեղեցու վարդապետութեամբ ստիպւած էք բուդդայականութիւնը համարել կեղծ, անմիտ, հերետիկոս ուսուցմունք, թէկ հեշտութեամբ կարելի է ապացուցել, որ

բարոյագիտութեան և բարոյականութեան տեսակէտից բուդդայականութիւնը ոչ միայն տեղի չի տայ քրիստոնէութեանը, այլ և թէ բարոյագիտական սկզբունքները, քրիստոնէական ուրիշ շատ դաւանանքների ու ծէսերի հետ նախնական բուդդայականութիւնից են անցել քրիստոնէութեան, որ 400 տարով փոքր է նրանից:

Եւ ահա մենք մօտենում ենք ինդրի կարևոր կէտին: — Ի՞նչ բան է, իսկապէս, քրիստոնէութիւնը: Պատասխան. — ուրիշ կրօնների նման, դա էլ մարդու ստեղծագործութիւն է: Այն մարդը, որ քաղաքակրթութեան ցածր աստիճանների վրա է կանգնած և չի կարողանում պարզ ըմբռնել բնութիւնն ու բնութեան երևոյթները, որ նրան վնաս են պատճառում կամ օգուտ բերում. որ չնչին հասկացողութիւն անդամ չունի թէ ինքը, մարդը, ինչ գիրք է գրաւել. — բոլորն ինչ իրեն անհասկանալի է, ու տեղի ունի իր շուրջը՝ վերագրում է գերբնական գոյութիւնների, որ իրենց կամքով ու քմահաճոյքով առաջացնում են իրեն անմատչելի երևոյթները, և որոնք նա աշխատում է պաղատանքներով, աղօթքներով, ծէսերով ու զոհարերութիւններով իրեն օգտակար դարձնել: Ազգերի քաղաքակրթական մակերեսոյթին նայած, որ կախւած է զիսաւորապէս նրանց կենցաղավարութեան նիւթական պայմաններից, իսկ այնուհետև հողի ու կլիմայի յատկութիւններից՝ բնութեան անհասկանալի ոյժերը, իբր գերբնա-

կան էակներ, ընդունում են տարբեր ձեւեր ու յատկութիւններ: Բայ այնմ մշակում է և աստւածապաշտութիւնը. որովհետև նրա ձեւերը շուտով աւելի բարդանում ու խառնաշփոթ են դառնում, մինչդեռ աղաչանքների յաջողութիւնը կամ անյաջողութիւնը գերազոյն արարածների համար կախւած է կրօնական պատէրների ձիշտ և բարեխիղճ կատարելուց, ապա վերջիններիս կատարելը յանձնում է այնպիսի մարդկանց, որոնք իրենց նվիրում են բացառապէս կրօնի գործին: Այդ տեղերը, պարզ է, որ կարող էին գրաւել աւելի խելահաններն ու ճարպիկները, որոնք և այդպիսով գերիշխանութեան են հասել: Այդպէս է առաջ եկել քրմերի դասը, որ ամեն ազգի տիրող գասակարգերի պաշտպանութեամբ կարողացել է կարճ ժամանակում աւելի ու աւելի տարածել իւ ազգեցութիւնը երկրիս բոլոր ազգերի մէջ: Որպէսզի համնէին դրան, նրանք աշխատել են համոզել ժողովրդին իրենց կարևոր նշանակութիւնն ու անհրաժեշտութիւնը, իսկ որպէսզի այդ բանում յաջողութիւն ունենան, անհրաժեշտաբար ստիպւած են եղել հակառակ կանգնել մարդկանց լուսաւորութեանն ու ապագայ զարգացմանը: Բնութեան և նրա երևոյթների անզիտութեանը միացան և տանջանքներն ու բոնութիւնները սեփական հրամայողների կամ օտար ազգերի ու նրանց առաջնորդների կողմից Այդ տանջանքները յաճախ նկատում էին իրը

արժանի պատուհաս այն յանցանքների համար,
որոնց շնորհիւ կրօնական վարժութիւնների պա-
հանջը միայն աւելանում էր: Ժողովուրդը յա-
ճախ անկարող է գտնւել սեփական ոյժերով թո-
թափել տիրողների ու բռնաւորների լուծը. այն
ժամանակ ծնւել է գերբնական փրկչի յոյսը —
Մեսսիան, որ գերազոյն արարածներին մատու-
ցած հաւատարիմ պաշտամունքի փոխարէն պի-
տի գայ ու փրկէ ժողովուրդը: Այդպէս են և
անալօգիական (նման) այլ հասկացողութիւնները,
որոնք աւելի կամ պակաս վառ ձեռվ գոյութիւն
են ունեցել համարեա բոլոր հին ազգերի մէջ՝ որ
Փոքր Ասիայի և նրան կից Աֆրիկայի ազգերի
պատմական զարգացման զօրութեամբ, յառաջա-
դիմութեան աւելի ուժեղ թափ են ստացել յու-
դայականութեան մէջ, որից վերջն առաջ է ե-
կել քրիստոնէութիւնը: Վերջինս պատմական հրա-
պարակի վրա երկացել է ոչ բոլորովին պատ-
րաստի ու կատարեալ կրօնի ձեռվ, ինչպէս սո-
վորաբար մեզ ուսուցանում են, այլ աստիճա-
նաբար միայն կրօնական սիստեմի է վերածւել,
որի ձեռնտուութիւնը՝ մարդկութիւնը ձնշելու մէջ,
շուտով հասկացան այն դարեշրջանի տիրապետող
դասակարգերը: Քրիստոնէութիւնը ևս նոյնքան քիչ
է «աստւածային յայտնութեան» արգասիք, որքան և
միւս կրօնական սիստեմները (յուդայականութիւ-
նը, բուդայականութիւնը, մահմեդականութիւնը),
որոնց հիմնադիրները նոյնպէս վճռապէս ընդգը-

ծել են իրենց աստւածային առաքինութիւնը, որ-
պէս այդ արել է, իբր թէ, քրիստոնէական կրօ-
ւի առասպելական հիմնադիրը: Ու հարիւրաւոր մի-
լիօն հետևողներ Բուդդայի, Կօնֆուցիոսի և Մահ-
մեդի, նոյնպիսի խորին համոզմունքով հաւատում
են վերջիններիս աստւածային առաքելութեանը,
որպէս և քրիստոնէութեան հետևողները Յիսուսի
աստւածութեան:

Փիլիսոփայական սիստեմները ես հետազօ-
տութեան չեմ ենթարկել, ինչպէս, ձեր խօսքե-
րին նայած, արել էք դուք, սկսած Սոկրատից ու
Գիւթագորից և վերջացնելով Շոպէնհաուէրով,
Ֆէյերբախով, Լասսալով ու Մարքսով: Ի դէպ՝
նկատեմ, որ վերջին երկուսի մտքովն էլ չի ան-
ցել փիլիսոփայական սիստեմ հիմնել, ուստի և
դուք կարող էք ձեր գիտութեան գանձարանից
գուրս հանել Լասսալի և Մարքսի փիլիսոփայա-
կան սիստեմները: Բայց և այնպէս, ես մի քիչ
զբաղւել եմ քաղաքականութեան պատմութեամբ
ու բնական գիտութիւններով և այդ դէպքում
գտել, որ մտածելու ընդունակ և բնական գի-
տութիւնների շուրջը եղած ուսումնասիրութիւն-
ներին ու բացումներին որոշ ծանօթ մարդու
համար պէտք է շատ դժւար լինի քրիստոնէու-
թիւնը «ամենալաւ և ամենակատարեալ» համա-
րել: Բնական գիտութիւններով անհերքելի կերպով
ապացուցած փաստերը, որ վերաբերում են երկրի
կազմութեանն ու հասակին, մարդկութեան սկըզ-

քնաւորութեանն ու զարգացմանը՝ քրիստոնէութիւնը զրկում են հիմնական հողից ու դէպի անկում տանում նրան։ Յետոյ Զեղ ևս, ինչպէս և ինձ, պէտք է յայտնի լինի, որ քրիստոնէութեան սկզբնաւորութեան ու զարգացման պատմութիւնը երբէք էլ չի վկայում նրա աստւածային ծագման մասին. որ, ընդհակառակը, վէճերը, անջատումները, պառակտումները և ամենատգուելի ձեր փոխադարձ հալածանքները ծաղկեցին արդէն առաջին քրիստոնեաների մէջ, և որ դրան օրինակ տալիս էին նրանք, որոնք իբրև «Եկեղեցու սպասաւոր և ուսուցանող» պարտաւոր էին «առաքինութեան» տիպար ցոյց տալ:

Քրիստոսը, որի գոյութիւնը շատ մութ է մընացել, որից ոչ մի խօսք չկայ, որ իրեն ձեռքով լինէր գրած, Աստւածամարդ է համարւել իր մահից շատ ուշ միայն։ Ամբողջ գարերի ընթացքում Յիսուսի հետևողների մէջ վիճաբանութեան առարկայ էր, թէ նա հաւասար էր Աստծուն, թէ միայն նման էր նրան։ 325 թւին միայն, Նիկիայի տիեզերական ժողովում, ուր նոյնպիսի կարգ ու կանոն էր տիրում, ինչպէս լեհական սէյմերում, և որտեղ քրիստոնէութեան երկու թշնամիքանակների ներկայացուցիչները հիմնական փաստեր չունենալով իրար անպատեցին ու խայտաւակեցին և վերջ ի վերջոյ մինչեւ անգամ հիանալի տուր ու դմբոց սարքեցին՝ վերջնականա-

պէս սահմանւեց Աստծու և Քրիստոսի երկու միացեալ անձնաւորութիւնը։

Այն դարեւըջանի քրիստոնեայ հովիւները հարկադրւած էին մի ամուր և հաստատուն հայեցք սահմանել Քրիստոսի առ Աստւած ունեցած յարաբերութեանց մասին, քանի որ այդ յարաբերութիւնների վէճը բացի հովիւներից գըրաւեց և հօտին և կարողացաւ վերջինից աւելի խելամիտ ու խոհուն մարդկանց կասկածամըստութիւն ներծնչել։ Այդ եղանակով արդէն քրիստոնէական եկեղեցու հիմնադրութեան առաջին քայլն արւած էր, այսինքն պարզւած էր, որ քահանաները ղեկավարէին ամբոխը տիրապետող դասակարգերի շահների համեմատ։

Հակառակ արևմուտքի քրիստոնեաներին, արևելցիներն իրանց համար մշակեցին Աստւածութեան նըրեակ միութեան գաղափարը, որ գոյութիւն ունէր շատ աւելի հին կրօններումն էլ, ինչպէս եզիստական։ Այդ բանը եկեղեցուն սպանում էր նոր վտանգ, ուստի և 56 տարի անց, կոստանդնուպոլիսի տիեզերական ժողովում երկու միացեալ անձնաւորութիւնը փոխւեց երրեակ միութեան, առաջին երկու միութիւններին աւելացնելով երրորդը — Սուրբ Հոգին։ Ահա ամենասուրբ երրորդութեան, քրիստոնէական եկեղեցու այդ ամենակարևոր դաւանանքի պարզ ու բոլորովին ոչ-աստւածային պատմութիւնը։ Յուսով եմ, որ գուք, տէր հայր, կամացայնէք,

որ իմ նկարագրած զուտ մարդկային դէպքերը շատ անզօր են քրիստոնէութիւնը աստւածացնելու համար ամուր հաւատ կռելու, և, որ, այդ կերպ սահմանւած դաւանանքները կարողացել են միլիոնաւոր հետևողներ գտնել միմիայն մարդկանց տգիտութեան շնորհիւ այն բանի, որ նրանք չեն հասկանում, և, դժբախտաբար, մինչև այսօր էլ չեն հասկանում իրենց յարաբերութիւնը դէպի տիեզերը, բնութիւնն ու նրա երևոյթները: Միլիոններով այդ համակրողների գոյութիւնը մինչև այսօր հնարաւոր է միայն այն պատճառով, որ տիեզերական ժողովներում սարքած վիճաբանութիւնների ու կոիւների օգնութամբ այդ դաւանանքները, իբրև «աստւածային յայտնութիւններ»՝ եկեղեցու և պետութեան ծաղկման համար, միւել են մարդկութեան մէջ, ու, այսպէս ասած, ներս են ծծւել մօր կաթի հետ: Եթէ ՏԻ դարի երկրորդ կիսին հարիւր հազարներով մարդիկ բորբոքւում են պապի անսխալականութեան նորագիւտ դաւանանքի համար, ապա զարմանալի չէ, որ համարեա երկու հազար տարւայ ընթացքում մարդկութեան խոշոր մասը կարողացել է հաւատալ հրաշքների ու քրիստոնէութեան յայտնութիւններին:

Հոգևորականութիւնը ստեղծել է ո. Երբորդութիւն, հոգեորականութիւնն էլ հնարել է սրբերի պաշտամունքը: Օրինակ առաջին դարերում սրբերի պատկերներ չկային եկեղեցիներում.

Ել'վիրի եկեղեցական ժողովը հանդիսաւոր կերպով արգելեց «պատերին յարգանքի ու պաշտամունքի առարկաներ ձեակերպելը»: Եվսէ վասկերանը, եկեղեցու այդ երկու նշանաւոր հայրերը, որոնք ապրում էին Քրիստոսի Ծննդից 390 տարի յետոյ՝ սրբերի պատկերներ գործածելը համարել են կռապաշտութիւն: Բայց և այնպէս քրիստոնէական եկեղեցում վերջերը ծաղկեց սրբերի, նրանց պատկերների ու մասունքների պաշտամունքը, ասենք մինչև հիմա էլ դեռ ծաղկում է, ինչպէս ամենաչար «հեթանոսների» մէջ:

Չեռքի համրիչները, որոնք այնքան մէծ դեր են խաղում կաթոլիկ եկեղեցու մէջ, վերցւած են հին եղիպտացին երից և բուդդայականներից. այդպիսով նրանց գործածելու սովորութիւնը զոյութիւն ունեցել է արդէն «հեթանոսների» մէջ:

Երեխանների մկրտութիւնը արևելցիների և տեսօնական ազգերի հնագոյն կրօնական սովորութիւն է: Քրիստոնեայ քահանաներն այդ քահը մտցրին IV դարում միայն, իսկ այժմ մկրտութիւնը կոչում է «Աստծու սահմանած խորհուրդ»: Հաղորդութիւնը, որ միայն հրէական Զատկի ձեափոխութիւնն է քրիստոնէական ոգով, նոյնպէս վերջերս է միայն ստացել իր այժմեան նշանակութիւնը: Նիկիայի հաւատոյ հանդանակում, որ կազմւեց Քրիստոսի Ծննդից յետոյ 325 թւին,

գեռ ևս ոչ մի խօսքով չի լիշտատակւած մկրտութեան մասին։ Հրէական Զատիկիր վերջերը փոխւել է քրիստոնէականի։

Դեին հաւատալը, որ այնքան աչքի ընկնող գեր է խաղում քրիստոնէութեան մէջ, որ բողոքականութեան ջանքերով մշակւեց, և, որ XVII ու XVIII դարերում կախարդների սոսկալի այրելու պատճառ է դարձել՝ փոխ է առնւած տւելի հին «հեթանոսական» կրօններից։

Անդր-գերեզմանեան կեանքի պաշտամունքը, — ամենեին քրիստոնէական գաղափար չէ։ Նակուլտուրական յայտնի աստիճանին հասած բոլոր հին ազգերի մէջ էլ գոյութիւն է ունեցել. իսկ քրիստոնէութիւնը միայն վերցրել ու իրեն համեմատ մշակել և զարգացրել է նրան։ Անդր-գերեզմանեան պաշտամունքը գոյութիւն ունէր նախկին յոյների մէջ (տես Հոմերոսի երգերը) այնպէս, ինչպէս և հին գերմանացիների մօտ (մահանից յետոյ Վալդալ գալը), և յունական փիլիսոփայութիւնը, *Սոկրատից սկսած, այդ դաւանանքը մշակել է միակ Աստծու պաշտամունքի հետ, որ հակադրւում էր հասարակ ամբոխի բազմաստածութեան։ Նոյնը կարելի է սաել և, այսպէս կոչւած, «ահեղ դատաստանի» մասին, որ յիշւում է պարսիկների սուրբ գրքերի մէջ, Քրիստոսի Ծննդից բաւական առաջ։

Մարդկութեան փրկութիւնը բարձրագոյն է-ակի ձեռքով, որ քրիստոնէութիւնը վերագրում է

իր հիմնադրին, նոյնպէս բացառապէս քրիստոնէութեան յատկանից չէ։ Այդ մասին Բուդդան ասել է գեռ I V դարում Ք. Ծ. առաջ, այդ ուսուցել է Զօրօաստրը, և մինչև անգամ Սոկրատը ակնարկել է այդ։

Այդպէս. կարելի է ապացուցել, որ ամենակարեոր գաւանանքներն ու ծէսերը, որոնց վրա կառուցւած է քրիստոնէութիւնը՝ ուղղակի «հեթանոսութիւնից» են փոխ առնւած։ և նոյնը կարելի է հաստատել քրիստոնէական և զուտ կաթոլիկ աստւածաշաշտութեան ձևերի վերաբերմամբ։

Ամեն բանի մէջ երկում է «հեթանոսութեան» հետեւողութիւն. ոչ մի տեղ ինքնուրոյն, սեփական մտքի հետքն անգամ չկայ, համարեաՅ Յոյների և հառմայեցիների գոհի սեղանը, որոնք իրենց հերթին փոխ են տոել եղիպտացիներից՝ դարձել է քրիստոնէութիւնի պատուի մասին ամբիոնը—քրիստոնէական ամբիոն։ Եկեղեցու ծառայողների զգեստների գոյնն ու ձևն էլ էապէս նոյնն է, ինչ հին Եղիպտոսի քրմերինը. արեի Ողբերիսի գոյները.—ինչպէս և անտրավարտիկ չը հագնող Եղիպտացիների երկար հագուստները մինչև այսօր էլ քրիստոնէական գանազան գաւանութեան քահանաներ զործ են ածում։ Ողբերիսի-դատաւորի գաւազանը դարձել է քրիստոնեայ Եղիպտոսի գաւազան։ Ողբերիսի—դիշերւայ քրմերի եղջիւրաւոր խոյը դար-

ձել է քրիստոնեայ քահանաների զլիսի զարդ։ Մինչև անգամ կաթոլիկ քահանաների կուլակը եղիպտական քրմերից է փոխ առնւած, որոնց մօտ նա ընդունւած էր ճառագայթափայլ արեաստւած Ողիբիսի նշանակ։ Օրհնած ջուրը, խնկարկութիւնը, ձեռնազրութիւնը, բաժակը, երաժշառութիւնն ու երգեցողութիւնը, աղօթքի ժամանակ ծնրազրութիւնը, զլիսի խոնարհումը շնորհների առաջ, փոխասութիւնը և հօտի բարձրածայն գոչիւններն ի պատասխան քահանայի խօսքերի—այսինքն ծէսերն ու արարողութիւնները, որ մինչև այսօր էլ այնքան նշանաւոր գեր են խաղում, մանաւանդ կաթոլիկ եկեղեցու մէջ, բոլորը առանց բացառութեան փոխառնուած են եգիպտական գաղտական տան հեթանոս աստւած պաշտուած թիւնից։

Արեգակի ծննդի օրը, որ տարւայ ամենակարճ օրն է, զարձել է Յիսուս Քրիստոսի ծննդեան օրը։ Հին-սեմիլիպտական կրակի աստծու տօնը ամառւայ մէջ՝ փոխւել է քրիստոնէական Յովիանու օրը։ Միրիական աշնանային տօնը, որ հրէաների մօտ «Կուշի» էր կոչւում, քրիստոնեաների մօտ տօնւում է իբր Միքայէլեան օր։ Յայտնի է նոյնպէս, որ գերմանացոց արեագարձը տօնելը միացել է եղիպտացոց աշեկի ծննդեան տօնակատարութեան օրւայ հետ, որ վերջերը փոխւել է Քրիստոսի Ծննդեան տօնի։

Քրիստոնէական և հեթանոսական սովորու-

թիւնների նմանութիւնն աւելի հեռու է գնում։ Եղիպտացիների արև աստծու գաղափարը միանգամայն համապատասխանում է ուշ ժամանակների քրիստոնէական Յիսուսի գաղափարին։ Թեքած զլուխ, ալիքաւոր մազեր, դէմքի մեղմ արտայայտութիւն, փայլ զլիսի շուրջը և օրհնող ձեռները,—այս բոլորը ձեսկերպւում են ինչպէս մէկի, այնպէս էլ միւսի մօտ։ Իզիդը, որ եղիպտացիների երկնքի աստւածուհին էր, մանուկ արեկի հետ, բոլորովին համապատասխանում է քրիստոնէական աստւածամօրը, ճառագայթների կամ աստղերի փայլումով շուրջկալած զլիսով և մանուկ Քրիստոսը ձեռքին։ Մինչև օրս էլ հարաւային Գերմանիայի մի քանի տեղերում կարելի է պատահել աստւածամօրը մավրիտանուհու կերպարանքում, որ վկայում է եղիպտական-աֆրիկական հայեացքների ազգակցութիւնը։

Քրիստոնէական ուսուցմունքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հին փիլիսոփայական հայեացքների ուղ և ծուծը, սկասձ Սոկրատից և Պլատոնից։ իսկ աստւածագայտութեան քրիստոնէական ձևերը այնպէս, ինչպէս մինչև օրս էլ գոյութիւն ունեն կաթոլիկ եկեղեցու մէջ, նոյնպէս մի խառնուրդ են հանդիսանում հեթանոսական աստւածագայտութեան սիմվոլների ու ծէսերի հետ։ Այդպէս, քրիստոնէութիւնը միանգամայն նման է միւս կրօններին։ Նա ներկայացնում է հոգեւոր մղձաւանջ քաղաքակրթութեան մի ամբողջ շըջանի, որի

ընթառքում նախկին կրօններն անցրել էին իրենց փայլուն ժամանակները: Քրիստոնէութիւնը—ուղղակի մարդու ձեռքի գործ է, որ զարգացել ու ձեւառուել է ըստ բարքերի, նիստ ու կացի և դաւանանքի այն ժողովրդի, որի մէջ նա տարածւել է: Հայաստանում լուսնի աստւածուհու՝ Արտէմիսի գլխաւոր տաճարը փոխւեց քրիստոնէական տաճարի, աստւածուհու արձանը հեռացնելով նրա միջից: Եփեսսում Դիանայի հեթանոսական տաճարը նվիրւեց ո. Յովհաննուն, իսկ Հըռոմում ո. Պետրոսի եկեղեցում մինչև այսօր էր հաւատացեալները համբուրում են իւղիտէրիք օնզէ ոտքը, որ, քանաների առելով, պատկերացնեմ է ո. Պետրոսին:

Քրիստոնէութեան համար տռաւելութիւն են համարում, որ նա միւս կրօններից զանազանում է միակ Աստծու հաւատով—որը, սակայն, միացնում է իր մէջ երեք անձը, մնալով միակ,—մի մտակարգութիւն, որ միանգամայն անմատչելի է մարդկային առողջ դատողութեանը: Սակայն զա նոյնպէս առասպելաբանութիւն է: Հրէանները Քրիստոսի Ծննդից 500 տարի առաջ արդէն հաւատում էին սուրբ երրորդութեան, մարմացած միակ Աստծու մէջ, և նոյն պաշտամունքը Քրիստոսից շատ զարեր առաջ գոյութիւն ունէր եփիպացիների մէջ: Քրիստոնէական բոլոր գաւանանքները, քրիստոնէական բոլոր եկեղեցական ծխակատարութիւնները գոյու-

թիւն են ունեցել արդէն Յիսուսի ծննդից միքանի գար առաջ հսդիկների և եփիպացիների կրօններում, հետեապէս և ամենայն իրաւամբ կարելի է ասել, որ քրիստոնէութիւնը ներկայացնում է այդ երկու հնագոյն քաղաքակիրթ երկրների կրօնների ընդօրինակութիւնը:

Եւ ինչպէս քրիստոնէական եկեղեցու դաւանանքներն ու ծխակատարութիւնները, համաձայնվերը պատմածին՝ ներկայանում են ոչ թէ «Աստւածային արարչագործութիւն», այլ մարդկային ձեռքի գործ, այնպէս էլ այն գրութիւնը, որի վրա յենուում է քրիստոնէութիւնը, նոյնպէս ներկայանում է մարդկանց ստեղծագործութիւն:

Աստւածաշունչն ահապին նշանակութիւնունի իբրև կուլառական-պատմական մի երեսիթ: բայց մինչև այսօր նրա հէնց այդ կուլուրական-պատմական նշանակութիւնը համեմատաբար աւելի քիչ է գնահատութեան ենթարկել, իսկ եկեղեցին նրա վրա նայում է ոչ իբրև կուլառական-պատմական գոկումէնալի, այլ իբրև աստւածային յայտնութեան հետեանքի վրա: Սակայն իբր այդպիսին, աստւածաշունչը, որ պարփակում է քաղաքակրթական երկհազարեան մի շըրջան, որ ամենատարբեր դէպքեր է նկարագրում և տարբեր գարագլուխների ու տարբեր հայեացքների տէր մարդկանց ձեռքով գրւած աւանդութիւններ է պարունակում իր մէջ,— և էնց դրա շնորհիւղիուն է ամենալսիս և ամենալսիս:

անլուծելի հակառակթիւնն եղով:
 Այդ անորոշութիւնն ու հակասութիւնները,
 որ գտնում են աստւածաշնչի կամ, այսպէս կոչ-
 ած, սուրբ գրքի մէջ, սկզբից ի վեր առիթ են
 տեղ միանգամայն տարբեր ձևերի խորհրդածու-
 թիւնների և ամենակատաղի վէճերի ու աղանդ-
 ների պատճառ դարձել քրիստոնէական եկեղեցու
 մէջ, որոնք մինչև այսօր էլ գոյութիւն ունեն:
 Այդ անորոշութիւնը և հակասութիւնները վաղուց
 արդէն կաթոլիկ ու աւետարանական եկեղեցին
 բազմաթիւ մանր աղանդների բաժանած կլինէր,
 եթէ հոգեոր և մարմնաւոր իշխանութիւնները ի-
 րենց բոլոր ջանքերով արքելք չկանգնէին, որ մի
 անգամ ընդմիշտ հաստատած վարդապետութիւնը
 անաղարտ մնայ թէկուզ բռնութիւնների միջոցով:
 Ուստի և, կաթոլիկ եկեղեցին, իւր տեսակէտից,
 միանգամայն բնական է վարւում աշխարհական-
 ներին աստւածաշնչի ընթերցանութիւնն արգե-
 լելով: Զէ՞ որ եթէ ուսումնականները չկարողա-
 ցան համաձայնութեան գալ աստւածաշնչի բո-
 վանդակութեան իմաստի առթիւ, և ի՞նչ կարելի
 է սպասել մարդկային պարզ առողջ գատողութիւ-
 նից: Մի գիրք չկայ, որ այնքան մարդ լինէր
 խենթացրած, ինչքան աստւածաշունչը. խեղճ
 երազողները նրա մէջ որոնում էին այն, ինչ որ
 չկար այնտեղ, իսկ երբ նրանց թւում էր, թէ
 ձշմարտութիւնը գտան, նրանք պատահում էին

մի ուրիշ տեղի, ուր հերքուում էր այդ ձշմարտու-
 թիւնը:

Այդպիսով աստւածաշունչը չի կարող «աս-
 տծու խօսք» լինել, մինչեւ անգամ այն մարդիկ
 չեն գրել նրան, որոնց անունը վերնագրի մէջ
 դրած է: Աստւածաշունչը ներկայացնում է այլ
 և այլ մարդկանց յօդւածների մի ժողովածու,
 որոնց մեծամասնութիւնը անունով բոլոր ո-
 վին յայտնի չէ և որոնք ապրել են զանազան-
 ժամանակներում: Քրիստոսի կեանքն ու վարդա-
 պետութիւնը մաքուր և անփոփող ներկայացնե-
 լու յաւակնութիւնն ունեցող պատմւաքծներ շատ
 են եղել, այդ պատճառով էլ մեր տարեգրութեան
 առաջին դարերում արդէն կատաղի վիճաբանու-
 թիւններ ու կոիւներ բարձրացան նրանց ստոյգ
 լինելու և գնահատելու առթիւ: Հետզհետէ միայն,
 առանձին եկեղեցական ժողովների շնորհիւ կարե-
 լի եղաւ որոշ չափով ամբողջութիւն պահպանել.
 Գրա համար նրանք ուշը չդնելով ստուգութեան
 կամ խարդախութեան, շատ թւով այդպիսի
 պատմւածքներ ոչնչացրին ու ներքեցին, որոնք
 կամ չէին համապատասխանում նոր պայմաննե-
 րին կամ հակաճառում էին ուրիշ պատմւածքնե-
 րի, որոնց ընդունելը ցանկալի էր:

Այդպէս, գարաւոր կոիւներից ու վէճերից
 յետոյ կազմւած էր աստւածաշունչը, «դաւանա-
 բանութեան անրիծ գիրքը» և «Աստւածային խօս-
 քը», որի ձշմարտութեանն ու արժանահաւատու-

թեանը կասկածանքով վերաբերւելը, դեռ վերջերս էլ, պետութեան տեսակետից անգամ, համարւում էր ամենամեծ յանցանք:

Մանրագնին ուսումնասիրութիւնները ցոյց տւին, որ Աւետարանի և Գործք Առաքելոցի ոչ մի մատեանը Քրիստոսի Ծննդից յետոյ Խ-դարուց առաջ զրւած չէ եղել: Դուրս եկաւ, որ նոր և Հին կտակարանի շատ տեղեր ներմուծւած կտորներ են, որ ինքնակամ արել են անյայտ հեղինակներ. իսկ եկեղեցին հնչել է նրանց իր շահերի ու ցանկութիւնների համեմատ, և քարոզել ժողովրդին «Աստծու խօսք»-ի տեղ: Աստւածաշնչի գոյութիւն ունեցող բոլոր ձեռագրերի համեմատութիւնը ցոյց տւեց, որ հինգ հազարից աւելի վարիանտներ կան, որոնցից շատերը էտպէս փոխում են այն տեղի իմաստը, որին վերաբերում են: Ու այդ բոլորից յետոյ էլ աստւածաշունչը «Աստծու խօսք» է, անխախտ ու անձեռնմխելի:

Համաձայնեցէք, տէր հայր, որ եթէ փիլիսոփայական սխատեմներն անգամ անգօր են բրիտոնէութեան աստւածայնութեան հաւատը տատանել՝ ապա նման փաստերը, պատմականօրէն ու զիտութեամբ հաստատած, ընդունակ են տարուբերել ամենաջերմ հաւատացեալների հոգիներն անգամ: Այս բոլորից յետոյ, դուք չպիտի զարմանաք, եթէ յայտնեմ, որ ես հակարակորդ եմ

ոչ միայն կաթոլիկութեան, այլ և առհասարակ ամեն կը օնի ի:

Կըօնը, որպէս վերն արդէն ասւեց, ներկայացնում է ժողովրդի կամ ժողովուրդների, կուլտուրական յայտնի աստիճանի արդինքը, որոնք կանգնած են քաղաքակրթութեան նոյն աստիճանի վրա: Մինչև անգամ միենոյն կրօնը զանազան ազգերի մօտ միանգամայն տարբեր իմաստ է ընդունում, եթէ այդ ազգերի քաղաքակրթութեան աստիճանն ու մտաւոր զարգացման պայմանները տարբեր են: Սպանիայում կաթոլիկութիւնը, էպէս, բոլորովին այլ երանգ ունի, քան ֆրանսիական կաթոլիկութիւնը. իսկ Անգլիայի բողոքական հայեացքները նշանաւոր չափով տարբերւում են Գերմանիայի բողոքական հայեացքներից: Բացի այդ, քաղաքակրթութեան աստիճանն ազդում է և կրօնի վրա: XIX դարի ամենաաստւածապաշտ քրիստոնեաները կասկածում են շատ բաների մէջ, ինչ XV դարի քրիստոնեաներն անյողոսդ հաւատում էին: Բաւական է միայն մտաբերել թէ դկին ու կախարդներին հաւատալը XVI և XVII դարերում ինչ դեր է խաղացել:

Սակայն հաւատի դաւանանքներն ու հիմքերը տատանուում են աւելի ու աւելի, քանի ընական գիտութիւնների և կուլտուրական պատմական հետազոտութիւնների արդիւնքները մարդկանց աւելի լայն շրջաններին են յայտնի դառնում: Մեր մոլորակի զարգացման պատմութեան ծանօթու-

թիւնը խորտակում է երկրի արարչագործութեան մասին եղած առասպելները, որոնք պատմւած են աստւածաշնչի մէջ։ Աստղաբաշխական հետազօտութիւններն ու գիւտերը ցոյց են տալիս, որ տիեզերքում երկինք չկայ, որ միլիօնաւոր աստղերը—ամենքն առանց բացառութեան մոլորակներ են, որոնք անկարելի են դարձնում հրեշտակների և «ուղեցոյցների» գոյութիւնը։

Սյդպիսով, բաւական պարզ ապացուցեց, որ քրիստոնէութիւնը ոչ «ամենալաւ», ոչ «ամենակատարեալ» կրօնն է, որ նա միւս կրօններից աւելի կատարեալ ու լաւ չէ, ուրիշ խօսքով նա նոյնպէս անկատար ու թերի է, ինչպէս և ուրիշները։ Մարդկութեան պրօգրէսի տեսակէտից քրիստոնէութեան մերացումն ուղղակի անհրաժեշտ է։ Իսկ քրիստոնէական մօրալը,—կամէք գուք։ Մօրան անկախ է քրիստոնէութիւնից և ամեն կրօնից առհասարակ, մօրալը յարաբերական է ժողովրդի կուլտուրական մակերեսոյթին։ Բոլոր ազգերն էլ յայտնի կանոններ են մշակել մարդկանց դէպ իրար ունեցած գիրքի համար, և այդ կանոններին հետեւելը՝ ընդհանուրի շահերի տեսակէտից, համարւում է անհրաժեշտ։ ոչ մի հասարակութիւն առանց այդ կանոնների չի կարող գոյութիւն ունենալ։ Նրանց խախտումը համարւում է անբարոյականութիւն և յաճախ պատժւում է երրորդական անձնաւորութիւնների կողմի դժգոհութեան արտայտութեամբ, կամ

նիւթական և մարմնական պատիմներով, որոնց իշխանութիւնն, իբր հասարակութեան ներկայացուցիչ, դնում է մեղապարտի վրա։ Հետեւալ երկու օրինակները կարող են ցոյց տալ, թէ ինչպէս տարբեր կերպով են վերաբերւում որոշ հիմնադրութիւններին միևնոյն կաթոլիկ եկեղեցու հետեւողները։ Որ ամուսնութիւնը կարող է օրինական լինել և առանց քահանայի օրինութեան— Փըրանսիացի կաթոլիկը գտնում է իրերի շարքում, իսկ աստւածասէր կաթոլիկ-գերմանացին այդպիսի ամուսնութիւնը համարում է ապօրինի կենակցութիւն, այսինքն միտեսակ ամենաանբարոյական բան։ Հիւսիսային-Ամերիկայի կաթոլիկները երկեղեցին պետութիւնից բաժանելը գտնում են բոլորովին բնական մի երեսյթ, իսկ շատ գերմանացի կաթոլիկներ այդ բանն անւանում են պետութեան կողմից եկեղեցու համար անպատկառ դաւաճանութիւն։ Սյդպէս ուրեմն, այն՝ ինչ մի քանիսը բոլորովին բնական և բարոյական են համարում, միւսները դատափիետում են, որպէս անբարոյական ու դատապարտելու արժանի։ Մէր առ մերձաւորը, սէր առ մարդիկ՝ պատւիրանները, նոյնպէս և ժուժկալութեան մասին— այդ բոլոր պատւիրաններն առանց բացառութեան կան բուդդայականութեան և մահմեղականութեան մէջ։ Նրանց խոստովանել են բոլոր ազգերը՝ քաղաքակրթութեան որոշ աստիճանին հասած, իսկ նողիկները, չինացիները, պարսիկները և արաբները աւելի լաւ են պահում

Նրանց գործնական կեանքում, քան քրիստոնէութեան հետևողները, որոնք բոլոր այդ հրաշըները յետաձգում են «հանգերձեալ», անդր-գերեզմանեան կեանքի համար: Միրոյ կրօնը՝ քրիստոնէական կրօնը, տասնեռթից աւելի դարերի ընթացքում օտարադաւանների նկատմամբ եղել է առելութեան, հալածանքների և ճընշումների կրօն: Մի կրօն չկայ աշխարհում, որ մարդկութեանն աւելի արիւն ու արցունք լինէր նատած, քան քրիստոնէութիւնը. մի կրօն չկայ, որ այնքան նողկալի յանցագործութիւնների առիթներ լինէր ներկայացրած, ինչքան դա. ու քրիստոնայ բոլոր դաւանութեան քահանաները մինչև այժմ էլ, երբ ինդիրը պատերազմի ու մասսայական կոտորածների շուրջն է՝ պատրաստ են իրենց օրհնութիւնը տալ: Եւ մի իշխանութեան հոգեորականութիւնը հանդիսաւոր աղերսանքներով դիմում է ընդհանուր Աստծուն, և իրոյ Աստծուն՝ թշնամու քանակն ի չիք դարձնելու:

Եթէ այժմ եկեղեցին չի բռնադատում մարդկանց այն աստիճան, ինչքան առաջ, այդտեղ պատճառը ոչ թէ քահանաներն են և եկեղեցու սպասաւորները, այլ համամարդկային պրօգրէսը, որ քահանաների ու եկեղեցու հակառակ և նրանց ընդդէմ կուելով՝ հասունացել է: Դուք ասում եք թէ կրօնին ծառայողների արարքները չի կարելի ի նախատինս կրօնի դնել: Բայց լսէք,

սիրելիս: Երբ քահանաներն ամենահին ժամանակներից մինչև մեր օրերը արհամարհում են կրօնի բարոյագիտական ու կ զ բ ու ն ք ն ե ր ը և օրէց օր դաւաճանում են այդ սկզբունքներին (կրկնում եմ, որ բարոյագիտական սկզբունքները անբաժանելի շաղկապւած չեն կրօնի հետ), ապա էլ ինչ արժէք կարող է ունենալ այդպիսի կրօնը: Մինչդեռ ամենաշերմեռանդ հաւատացեալները, երևակայելով թէ բարիք են անում, ամենից աւելի են վնաս և ել մարդկութեանը. որովհետեւ ամեն կասկածանք դաւաճանքների մէջ՝ հերձած են ընդունել, ամեն տատանում կրօնական հիմքերի՝ ամենամեծ յանցագործութիւն, որ նրանք արմատախիլ են արել հրով և սրով: Խաչակրաց արշաւանքները, կրօնական անթիւ հալածանքները, ինկվիզիցիան, հրէական գարշանքները, կախարդական գործողութիւնները, որոնց պատճառով հարիւր հազարաւոր մարդիկ են ոչնչացել իբրև նախապաշարմունքների զո՞ն, — բոլոր մոլեուանդ քահանաների դրդումներով ու յորդորներով է կատարւել, խոհեմ և սառնարիւն քահանաների հովանաւորութեամբ, կրօնի ոյժը տարածելու, իր ենց ազգեցութիւնը տարածելու և յաճախ շահագործելու նկատումներով:

Քրիստոնէութիւնը թշնամի է ազատութեան և քաղաքակրթութեան: Իր ուսուցմունքի մէջ «Աստծու սահմանած» իշխանութիւններին հլու

հնագանդութիւն, խոնարհութիւն և համբերութիւն քարոզելով, կապւած նրա հետ, թէ մարդիկ իրենց բոլոր տառապանքների փոխարէն այս կեանքում, պէտք է երանելի վարձատրութիւն ստանան հանդերձեալ կեանքում, քըիստոնէութիւնը շեղել է մարդկութեանն իր նպատակից — բազմակողմանի կատարելութիւնից, բարձրագոյն զարգացումից ու ձեռք բերւած բարիքների վայելչութիւնից: Քրիստոնէութիւնը մարդկանց պահպանել է ճնշումների ստրկութեան մէջ և մինչև մեր ժամանակն էլ նա հանդիսանում է ամենակարեւոր գործիք՝ քաղաքական և սօցիալական շահագործութիւնների: Յունական և հոռմէական քաղաքակրթութեան անկումից յետոյ քրիստոնէութիւնը հազար տարուց աւելի տիրեց Եւրոպային, ու, հետեանքին, ազգերը տգիտութեան և բարբարոսութեան մէջ թաղւեցին: Սպանիան, որտեղ այն ժամանակ, այսինքն հեթանոս մավրերի կամ արաբների տիրապետութեան օրով ըրիստոնեաներն ու հրէաներն օժտւած էին այնպիսի իրաւունքներով, ինչպէս ժամանակակից քաղաքակրթերին երկրներում, այն էլ ոչ ամեն տեղ հրէաների նկատմամբ՝ Սպանիան դարձաւ ֆանատիկոսութեան և կրօնական հալածանքների օջախ՝ երբ քրիստոնեաները արաբներին դուրս արին և Սպանիայում քրիստոնէութիւնը տիրապետող կրօն դարձաւ: Ամենածագրած քաղաքներն ու ամբողջ նահանգներ

դատարկւեցին, արաբական վայլուն գիտութիւնը ոչնչացւեց և այդպիսով, ամբողջ երկիրը գահավիժւեց մինչև քաղաքակրթութեան այն ստորաստիճանը, որից մինչև այսօր էլ չի կարողանում բարձրանալ: Գիտութիւնն ու պղողը էսուր, որ XII դարում արթնացաւ Իտալիայում, իսկ XV դարում Գերմանիայում՝ ոչ թէ քրիստոնէութեան ազգեցութեամբ էր, այլ շնորհիւնին-հեթանոսական գրականութեան ուսումնակրութեան, որ գուրս հանեց նրան փոշու ու աղբի այն կոյտի տակից, որի մէջ քրիստոնէութիւնը թաղել էր նրան, որ սակայն՝ հակառակ եկեղեցու յարձակումներին ու հալածանքներին, շարունակ աւելի ծաւալւեց, մարդկութիւնը պրօգրէսսի ճամբին գնելով: Կրօնը միայն միջոց է եղել որոշ նպատակի համակարգ՝ մասսաների վրա իշխանութիւն տարածելու ու կռելու այդ իշխանութիւնը:

Քրքոյկիս մէջ ես յիշեցի արդէն, որ զանազան դարաշրջանների հեռատես ու անւանի մարդիկ նայում էին կրօնին միայն իբրև մի միջոցի վրա, որով կարելի է նպատակի համակարգ առթիւ, բերել և եկեղեցու մի քանի հեղինակաւոր անձանց հայեցքները: Սիներից եպիսկոպոսը Քրիստոսի Ծննդից յետոյ 410 թւին յայտարարեց. «Ժողովուրդն անպատճառ ուզում է, որ իրեն խարեն,

առանց խարէութեան նրա հետ միանգամայն անկարելի է գործ ունենալ... Գալով ինձ, ես, միշտ պէտք է փիլիսոփայ լինեմ ինձ համար, և քահանայ (այս դէմքում խաբեբայ) ժողովրդի համար»: Գրիգոր Նազիանցին զրում էր Յերոնիմին. «Ժողովրդի վրա տպաւորութիւն գործելու համար միայն ճոռոմաբանութիւն է հարկաւոր. Ժողովուրդը քանի քիչ է հասկանում, այնքան աւելի է սքանչանում ու խոնարհում: Մեր հայրեն ու ուսուցիչները յաճախ այն չեն սաել, ինչ մտածել են, այլ այն՝ ինչ նրանց զրդել են հանգամանքներն ու անհրաժեշտութիւնը»: Այն ժամանակ, երբ պապը Յուլիո II էր (1475—1513թ.), Հռոմի պալատական կեանքը աչքի էր ընկնում անբաւ խրախնձանքներով, ցոփութիւններով և արհամարհանքով դէպի կրօնը: Մի անգամ աստւածամոլ Գերմանիայից մեծ քանակութեամբ դրամ ստացւեց, և պապն այն ժամանակ իր կարդինալներից մէկին ասաց հետեւեալ ուշազրաւ խօսքերը. «Զէ, եղբայր, Յիսուս Քրիստոսի մասին եղած առակը բաւականին օգտաւէտ է»: Թէ որպիսի կարծիք ունէր Փրանսիական դեսպանը Պողոս III պապի բարոյականութեան մասին XVI դարում, ցոյց է տալիս նրա իր արքունիքին զրած նամակի հետեւեալ կտորը. «Պապը և իւր նախարարները (կարդինալները) մինչև հիմա ամեն կերպ խաբել են մեզ: Այժմ նրանք աշխատում են թագցնել այդ, կեղծաւորութիւնով ու խորամանկու-

թիւնով և ուղղակի լրբութեան են հասնում»: Պողոս IV պապը ուղղահաւատ կաթոլիկ սպանացիների դէմ կուելու էր կանչում ոչ միայն բողոքականներին, այլ և քրիստոնեանների «վաղեմի թշնամիններին»—տաճիկներին, որոնց նա հրավիրում էր իտալիային պատկանող Սիկիլիայի և Նէապօլիսի վրա յարձակելու: Աղէքսանդր VI պապն իր հարազատ աղջկայ՝ հոչակաւոր Լուկրեցիա Բօրջիայի հետ արիւնապղ ծութեամբ մեղանչեց. իսկ մի խնջոյքի ժամանակ, երբ նա ուզում էր թունաւորել եօթ կարդինալների, վերջիններս կարողացան կաշառել սպասաւորին և նրան թունաւորեցին իր որդու հետ: Այդպէս, չնայած իր կուսակրօնութեան, նա ունէր տղայէլ, աղջիկ էր:

Դուք առարկում էք իմ պնդումի դէմ, թէ եկեղեցին և պետութիւնը միշտ սրտառուչ դաշնակցութեամբ են գործել, երբ խնդիրը ժողովուրդը շահագործելուն է վերաբերել. սակայն մոռացել էք ապացուցել թէ իմ այդ հաստատումը անհիմն է:

Եթէ առհասարակ մի տէրութիւն պէտք է քրիստոնէական տէրութեան նմուշ հանդիսանար՝ այդ, անտարակոյս, եկեղեցական Պետութիւնը պիտի լինէր, որ գտնուում էր պապի և բարձրագոյն հոգեուրականութեան անմիջական կառավարութեան տակ: Շատ լաւ, ինչ պատկեր էր ներկայացնում այդ Պետութիւնը մինչև իր գոյու-

թեան վերջին օրերը: Ամենաողորմելի, որպիսին
միայն կարելի էր գտնել Եւրոպայում:

—Մայրայեղ արհամարհւած, տղիտութեան
ու նախապաշարումների մէջ ընկդմւած ժողո-
վուրդ. աշխատանքի շահագործում ու հարստա-
հարում. ամենասարսափելի չքաւորութիւն ու
մասսայական ապշեցնող թշւառութիւն. աւելի մեծ
ծաւալով ոճրագործութիւն, քան աշխարհի մի
ուրիշ պետութեան մէջ. հասարակութեան ան-
ապահով վիճակի առակ դառնալը. կարդ ու կանոնի
կատարեալ բացակայութիւն պետական գործերի
վարչութեան մէջ և քրիստոնէական մերձաւորի
սիրոյ ուսնակոխում, որն ամենից առաջ օտարա-
դաւաններին հաշտ նայելու մէջ պիտի երևար,—
ահա թէ որպիսի պատկեր է ներկայացնում քրիս-
տոնէական օրինակելի պետութիւնը: Եւրոպայի
ամեն պետութեան մէջ, որտեղ եկեղեցու ներ-
կայացուցիչները, լինի բողոքական թէ կաթոլիկ,
ձայն ունեն կառավարական հարցերում կամ ժողո-
վրդական ներկայացուցչութեան մէջ, միշտ իրենց
ազգեցութիւնը գործ են դնում ժողովրդի թշնա-
մի պետական իշխանութիւնը պաշտպանելու ու
ամրացնելու համար: Ներկայ ըոսէին կաթոլիկ
հոգևորականութիւնը Գերմանիայում, արտաքուստ
բացառութիւն է կազմում, բայց ճիշտ որ, արտա-
քուստ միայն: Շնորհիւ թեթևամիտ քաղաքակա-
նութեան, որպիսին երբ և իցէ տիրող դասակար-
գին պատկանող անձը վարել է, կաթոլիկ հոգևո-

րականութիւնն ընկել է ճնշւած տարրի դրու-
թեան մէջ: Հէնց այդ դրութիւնը և միմիայն այդ
դրութիւնն է, որ դրդում է յիշեալ հոգևորակա-
նութեանն իր պահանջները յայտարարելու, ո-
րոնք այլ պայմաններում ոչ կը յայտարարէր և ոչ
էլ կիրախուսէր: Բաւական պարզ է, թէ գեռ մի
քանի տարի առաջ Բաւարիայում, Պրուսիայում
և ուրիշ տեղեր կաթոլիկութեան առաջնորդներն
ու բանիմաց ներկայացուցիչները (առաջնորդ-
ւողներն ու անգիտակցական տարրեցը հաշիւ չեն)
ինչ դիրք բռնեցին. նրանք միշտ եղել են աջա-
կողմեան, ծայրագույն աջակողմեան, ինչ-
պէս նրանք ներկայումս գտնուում են Աւստրիայ-
ում և մանաւանդ Ֆրանսիայում և որ, շուտով
նորէն Գերմանիայում կերևան (*): Այդպիսով,
ոչինչ իլլիցիաների մէջ չենք ընկնում այդ դէպ-
քում: Ասենք այլ կերպ արդեօք կարո՞ղ էր լինել:
Մարդկութեան պրօգրէսի պայման հանգիսանում
է կոիւ յայտարարելը ամեն արտօնութիւնների
ու ամեն տիրապետութեան: Եկեղեցին ժողո-
վրդին տիրապետում է ոչ պակաս քան պետու-
թիւնը: Հեղինակութեան ու կոյր հաւատի վրա
հիմնելով, նա ստիպւած է կուել այն ամենի
դէմ, ինչ կարող է տատանել այդ հիմքերը, այ-
սինքն գիտութեան ու քաղաքակրթութեան դէմ.
— դէպի որոնց ձգտում է սօցիալիզմը, — սօցիա-

*) Այս գուշակութիւնն իրօք կատարւեց:

լիզմը, որ հանդիսանում է իսկական մարդասիրական և ուսմկավարակուն վարդապետութիւն, որ իրօք ցանկանում է իրականութիւն դարձնել բարոյական օրէնքները. օրէնքներ, որ տասննութ դարերի ընթացքում եկեղեցուն ծառայել են համարեա միմիայն իրու մասսաները շահագործելու ու հարստահարելու դիմակ. սօցիալիզմը, որ ձգտում է իրականացնել ընդհանուր հաւասարութիւն, ընդհանրական սէր, ընդհանուր երջանկութիւն, ոչ թէ նրա համար, որ այդ բաները քարոզել են Քրիստոսը, Բուդդան կամ Մահմեդը, այլ որովհետև այդ նպատակներին ու իդէալներին, մարդկութիւնը աշխարհի ամեն ծայրերում, զիտակցօքէն թէ բնազդով, միշտ ձրդտել է կրօնների ու պետական ամեն տեսակ կարգերի միջոցով, որոնց նա նորէն կձգտէր, եթէ աշխարհում անգամ գոյութիւն չունենային ոչ Բուդդան, ոչ Քրիստոսը, ոչ Մահմեդը: Վերջիններս, աշխարհը ներկայացնելով արցունքի հովիտ, ցաւ ու համբերութիւն բարոզելով, մարդկանց ցոյց տալով հանդերձեալ կեանքը՝ որի գոյութիւնը չի կարող հաստատ լինել, քանի որ դա ցնորդ է, — մարդկութիւնը կաշկանդել են ամենածանը շղթաների մէջ և խոչընդոտ հանդիսացել նրա պրօդրէսսին:

Այն ամեն բարիքները, որ առաջ եկան քրիստոնէութեան օրով՝ նրան չեն պատկանում. իսկ այն բոլոր չարն ու բարին, որ

նա բերեց իր հետ՝ մենք չենք ցանկանում: Այդ է, երկու խօսքի մէջ, մեր հայեցակէտը:

Եւ այժմ, դուք, տէր-հայր, կհասկանաք, թէ ինչպէս անվերջ տարբեր են մեր ձգտութմները քրիստոնէութեան ձգտութմներից: Զեր եպիսկոպոսները, եկեղեցիների աւագները, ձեր կոմսերը, բարօններն ու բուրժուաները, որ կանգնած են կաթոլիկ շարժման գլուխ՝ մեզ հետընդհանուր ոչինչ չունեն: Նրանք չեն ձգտում մարդկանց հաւասարութեանն ու երջանկութեանը, քանի որ, հակառակ դէպքում, նրանք ստիպւած պիտի լինէին հրաժարւել իրենց արտօնեալ զիրքից, կամ գոնէ, որ նրանցով օգտէին մարդկութեան բարօրութեան իրականացման համար, որը նրանք, իբր թէ, ցանկանում են: Սակայն նրանք հանդիսանում են արտօնութիւնների, դասակարգային ու որոշ խաւերի զերիշխանութեան գլխաւոր պաշտպաններ: Նրանք կամենում են ոչ թէ արդարադատութիւն, այլ բարեգործութիւն. ոչ թէ հաւասարութիւն, այլ անմըռունչ հնազանդութիւն. ոչ թէ գիտութիւն, այլ հաւատ: Մինչզեր երբ ժողովուրդը պահանջում է մարդավարի կացութիւն ու իր սեփական աշխատանքի արդիւնքը՝ նրանք բախտի առաջ հնազանդութիւն են քարոզում և միիթարում նրան հանդերձեալ կեանքի հեռանկարով, և այդ այն ժամանակ, երբ իրենք ապրում են շուրջ

խութեան մէջ, յղիացած ուրիշի աշխատանքով։
Կաթոլիկ ժողովուրդը, որ չարչարւում ու տառապում է, որ մինչև այսօր այդ մարդկանց է
հետևել, — մերն է, և մենք վստահ ենք, որ մի
գեղեցիկ օր նա կհասկանայ իր դրութիւնը և
կանցնի մեր կողմը։ Այն ժամանակ, եթէ շահագործող ու հարստահարւող ցածր հոգեորականութիւնը, որի պրօլետարական կացութիւնը
դուք այնպէս բնորոշել էք՝ նոյնպէս կանցնի մեր
շարքերը, մենք գրկաբաց կընդունենք նըան։ Նա
կըմբռնի այն ժամանակ, որ իդէալական այն իդ-
ձերը, որ ինքն իզուր ջանք է թափել իրականաց-
նել իր եկեղեցու միջ՝ կարող են իրականա-
նալ միմիայն մեր շարքերում և միմիայն մեզնով։
Որ մենք աւելի վսեմ գործ կտանք, քան կրօնի
դատարկ ծիսակատարութիւնը, կրօնի, որ մինչև
հիմա, բոլոր այլ կրօնների նման, մարդկութեան
խկական պրօքէսսին խոչընդու է հանդիսացնել։
Դուք, տէր-հայր, ձեր սեփական խոստովաճքին
նայած՝ նիւթապէս աւելի վատթար կացու-
թեան մէջ էք, քան ամեն տան սպասաւոր կամ
սպասաւորուհի, և վարում էք ամենաթշւառ
պրօլետարի կեանք։ մինչդեռ եպիսկոպոսներն
ապրում են որպէս բարօններ և օգտւում արդիւնք-
ներով ու մեծարանքներով։ Եթէ, ինչպէս դուք էք
ասում, քրիստոնէութիւնը ձգտում է միենոյն նպա-
տակներին, ինչ սօցիալիզմը՝ ապա միանգամայն
անհասկանալի է, թէ ինչպէս է նա կարողանում

հովանի լինել դասակարգային խտրութիւնների ու
անհաւասարութեան այդ սիստէմին և պաշտպա-
նել նրան իբրև «Աստծու սահմանած հիմնադրու-
թիւն»։ Կարծի է արդեօք այդպիսի կրօնը մեր
յարգանքներն ու յորդորները վայելել։ Կամ երկի-
դուք կարծում էք, թէ մենք պէտք է սպասենք
ընդհանուր բարօրութեանը և մարդկութեան եր-
ջանկութեանը, մինչև որ կրօնը կտայ մեզ, կրօ-
նը, որ տասն և ինն դար է արդէն, ինչ գոյու-
թիւն ունի և մինչև այսօր անկարող է եղել գո-
նէ իրեն ծառայող քահանաներին հէնց իրեն սկըզ-
բունքները ներշնչել։ Այդ, գէպքում մենք ստիպ-
ւած կլինէինք նորին ամբողջ գարեր սպասել,
մինչդեռ մարդկային կեանքը շատ կարճատե է։
Ոչ, և ոչ։ Որքան էլ դուք աշխատէք տարբերու-
թիւն որոնել եկեղեցու և նրա «առանձին» ծա-
ռայողների մէջ՝ ձեզ այդ չի յաջողի և ոչ էլ
այդ հասրաւոր է։ Այն ինչ դուք աշխատում էք
ցոյց տալ իբրև բացառութիւն՝ սկզբունք և օ-
րէնք է, իսկ ձեր օրէնքը մի բացառութիւն է և
դուք գիտէք, որ բացառութիւնը երբէք չի խեխ-
տում օրէնքը։


Ուստի և ես չեմ կարող համաձայնել ձեր
կարծիքի հետ, որպէս թէ քրիստոնէութիւնը
ձգտում է միենոյն նպատակներին, ինչ որ սօ-
ցիալիզմը՝ Քրիստոնէութիւնը և սօցիալիզմը թրշ-
նամի են իրար, ինչպէս կրակը և ջուրը։ Այս-
պէս կոչւած բարի սերմը քրիստոնէութեան մէջ,

որ, սակայն, ես չեմ գտնում նըանում՝ չի պատկանում բացառապէս քրիստոնէութեանը, այլ ընդհանուր մարդկութեանը. իսկ նրա ամբողջ էութիւնը կայանում է—բազմաթիւ ուսուցմունքների ու գաւանանքների մէջ, որոնք թշնամի են մարդկութեանը: Թողնում եմ, որ ինքներդ ձեր տեսական դօգմաների հակասութիւնները համաձայնեցնէք գործնականի հետ:

«Գերմանական բէյխստագի և լանդստագների պարլամենտական գործունէութիւնը և սօցիալ-դեմոկրատիան» դրքոյկի հեղինակը:

Լայպցիգ.

փետրվար. 1874 թ.

——

}}

Յովիաննէս Գալքեանի հրատարակութեամբ լոյս
ին տեսել՝

1.	Մ. Գօրկիյ, Մակար Զուղըա, թարգմ.	
	Ա. Բարիեան	10 կ.
2.	Ա. Բարիեան, Բանաստեղծութիւններ.	20 կ.
3.	Լ. Անդրէս, Անդրէսը, թարգմ. Ա. Բա-	
	րիեան	10 կ.
4.	Վ. Ռազայն, Լորъ-да Լորъ. Նացի Դեր-	
	վիշ, թարգմ. Հայերէնից Վ. և Ա. Բա-	
	րիեաններ	12 կ.
5.	Մօպասան, Մի կեանը, թարգմ. Ս. Տէր-	
	Անանեան	1 ր. —
6.	Ա. Ագառոնյան, Բազուկ: Կոչուկъ хлеб-	
	ца, Պէտухъ, թարգմ. Հայերէնից Վ.	
	Բարիեան	10 կ.
7.	Ա. Աննեսսկայա, Հանրապետութիւն	
	թարգմ. Ս. Տէր-Անանեան	5 կ.
8.	Ա. Բերել, «Քրիստոնէութիւնը և սօյի-	
	ալիզը» թարգմ. Ս. Տէր-Անանեան . . .	10 կ.

Դիմել հրատարակչին--Армянскъ (Таврической губерн.) Ивану Давидову և Կովկասի յայտնի գրալածառներին:

«Ազգային գրադարան»



NL0210214

